
մէջ անպայման բան մը կայ։ Ահա այս է հանճարին փորձարարը։

«Մաղիկ»ի խմբագրութիւնը ինքզինքը չի խափեր և իւր յաջողութեան յոյսը քնքրելիքը կարողագոյն թերթերով շրջապատուած տեսնելն է որ իր գործը չափէն աւելի կը գծարարացնէ, այս' գիտենք որ ամեն թերթ իւր մասնաւոր արժանեօք իր դերքը բռնած է լրագրութեան մէջ և մեզի կը մնայ ճշնիւ նոր կարողութիւն մը ցոյց տալու որ մեզի ալ տեղ բացուի գրական հրապարակին վրայ։

Ահա «Արեւելք» մեր էն պահպանող թերթը, լայն էջեր կը բանայ ի հարկին, էն գծարարին խնդիրները ամենէն յաջողակութեամբ պաշտպանելու, ի մեծ հիացումն նոյն խոյն հակառակ կարծաւորներուն սրբ կը խոստովանին թէ «Արեւելք» այն օրը գեղեցկագոյն թերթն է հրապարակին վրայ։

«Հայրենիք»ի մասնագիտութիւնն է՝ ձեռք անցուցած նիւթին այն աստիճան ածմէութիւն մը տալ որ մարդ չի տարակուսիր կարծել թէ՛ խմբագրականներու մենաշնորհը իրեն է տրուած։

«Ճէրմաէի Ծարգիչէ» իւր գոյութիւնն ապահոված է, շատ մը առաւելութիւններէ զատ՝ օրուան թարմ լուրերը հաղորդելու մասնագիտութեամբ։

«Մանգուլ» իւր խմբագրականներու տուր և արդար քննադատութեանց կարօտը քաշել կու տայ նոյն խոյն անոնց որք իրմէ կը ձողկուին և իւր թերթը ամենուրեք հաճութեամբ կ'ողջունուի։

«Փունջ» իւր բազմամեայ անխափան քննադատութեան մէջ գաւառական լուրերով կը պարծի և իրաւ կը բազմանք որ մեր թերթն ալ «Փունջ»ի նման երկարատեւ կեանք մը ունենայ։

Իսկ մենք ի՞նչ դերք պիտի բռնենք լրագրութեան մէջ, «Մաղիկ»ն ի՞նչ ըլլալ սահմանուած է, առաւելապէս ի՞նչ բանի համար պիտի վնասուի։

«Մաղիկ»ը սահմանաւ է գրական հանդէսի մը բարձրութեան հասնելու, ուստի մեր յարգոյ աշխատակիցներն այս գիտակցութեամբ պէտք է հրապարակագրի մը հանճարովն օժտուին, ճիշտ ծանօթութեամբ գողափարնին լարուի, ինքնատիպ և նոր տեսութիւններ ունենան իրաց վրայ, լաւ ճախարակեալ սահուն սփ մը ունենան ու հիներէն ակնածելով նորերէն յարգուիլ սկսին։

Գծարարութիւնը մեզ չպիտի կասեցնէ. մենք գիտենք որ համբաւին պատուանդանը վիշտն ու նեղութիւնն է, նաեւ համարուած ենք որ հանճարին խթանը արդեւքն է, ու եթէ չը յաջողինք մեր ձեռնարկին մէջ՝ ներողամիտ հասարակութիւնը գէթ մեր ջանքը պիտի գնահատէ ու գովելի պիտի դանէ։

ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Մեր մեծ խնամատէր գրագէտին Եղիա էֆ. Տէմիրճիպաշեանի այս դամբասականը զոր արտասանած է Իսկուհի Տէմիրճիպաշեանի մահուան առթիւ ասկէ մէկ երկու ամիս առաջ, կը հրատարակենք ստորեւ. Եղիա էֆէնտի մեր այն գրագէտներէն է որոնց գրուածները չեն հինար, միշտ նոր են ու միշտ փոփոխուին։

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՄԷ

Տեա՛րք,

Անշուշտ մականուան նոյնութիւնը չէ՛ որ զիս այս դադալին վրայ կը կոչէ։ Հաւուս՝ Գալուստ Աղային՝ Արքունի Տէմիրճիպաշեանի պաշտօնէն կամաւոր հրաժարումէն յետոյ, Պետրոս Աղան անուանուած է Արքունի Տէմիրճիպաշի։ Ո՛չ անուանական ո՛չ ընտանեկան նոյնութիւնն անտարակոյս իմ վրաս պարտք կը դնէին երեւնալ այս դադալին վրայ։ Հասցիւղցի մ'է՛լ թաղին բարեկամ, որ կու գայ վերջին մեծարանքը մատուցանել Հաղիւղցւոյ մը՝ թաղին բարեկամուհի, ի՞նչ կ'ըսեմ՝ թաղին բարերարուհի։

Հաղիւղ ունեցաւ երկաթէ կինն, և Հասգիւղ ունեցաւ կրակէ կինն։ Հոն, այն եղական հաստատութեան շրջափակին մէջ՝ զոր կանգնեց իւր երկաթեայ կամայ զօրութեամբ, մօտ որք ազնկանց՝ որոց նուիրեց գեղեցկագոյն մօտ իւր կենաց, կը հանգչի Արքունի մայրապետ, երկաթէ կինն։ Եւ հոս ահա սեւ հողին կը յանձնենք այսօր կրակէ կինը բոցափայլ, որուն վրայ ցուրտ մարմարը պիտի բարձրանայ վաղ. հո՛ղը պիտի դնենք, Հասգիւղի նորահանգոյց բարերարուհւոյն՝ Մարիամ Էտիլեանի՝ մօտ հանգչելու համար, կրակէ կինն՝ Իսկուհի Տէմիրճիպաշին։

Իւր մահուան գոյժն, երէկ, Հասգիւղի հարազատ գաւառի մը՝ Պաղտիկ էֆ. Պապաեան՝ ինձ հաղորդեց ոչ անշուշտ գուժկանի պաշտօն կատարելու համար, այլ ինձ թեւադրելու համար ինչ որ՝ իրբեւ ատենաբան Հասգիւղի՝ պարտէի կատարել յուզարկաւորութեան հանդիսին մէջ։ Եւ մա՞րթ էր լուռ մնալ ուր Իսկուհի Տէմիրճիպաշին կար անշուշտ, ուր ընդարձակ խնայականութիւն մը՝ դադարած, բովանդակ տենդալի գործունէութիւն մը՝ վախճան դառած, հանրային մայր մը՝ թեւերն առ յաւատ ծաղած իւր կուրծքին վրայ որ այնքան ուժգին կը բարակէր, Ներսիսեան վարժարանի Խնամակալուհի մը՝ հրաժարած... կեանքէն։

Տղայութեան ժամանակ շատ անգամներ համբուրած եմ, գրեթէ հանապազօր, Իսկուհի Հանրմին ձեռքն։ Որովհետեւ այս թաղէս և այս երկրէս հեռու մնացի բաւական տարիներ, և այլ եւս ինձ դուռ ուրեք կը տրուէր տեսնել այդ անկանաւոր կինն, իմ մանկական տաք շրթներովս կարծես թէ կանխապատուց վճարք եմ Հասգիւղցւոյ երախտագիտութեան նուիրական հարկս առ Տէմիրճիպաշի Տիկինն։ Եւ երբ կ'արտասանեմ այս «Երախտագիտութիւն» բառն, ո՛հ, պէտք է յայտարարեմ, Տեա՛րք իմ, թէ քիչ անգամ այնքան լիափրտ ու լիաշուքին արտասանած եմ զայն։

Սակայն — կը հարցնեմ ես ինձ — երախտագիտական այլքան արտայայտութիւնք տեղի պիտի ունենային այս դադալին վրայ, եթէ միմիայն աղքատասէր կին մ'եղած ըլլար հանդուցեալն։ Ո՛չ անշուշտ։ Որքան ընչաւէտ կանայք աղքատասէր, այլ սակայն ո՛չ ի կենդանութեան և ո՛չ յետ մահուան

հանրային երախտագիտութեան այսպիսի ցոյցերու կ'արժանանան կին մը կրթական խրնդրով գրողեցա՛ւ, դպրոցի մը սեմին ոտքը ներս դրա՛ւ, և կամ դպրոցասէր անձանց տուներու սեմին ոտքը ներս դրա՛ւ յանուն դպրոցի, յանուն մանկանց դաստիարակութեան, այդ կինն ունեցաւ՝ նախ անշուշտ՝ պարտուց կատարման առթած անբաղդատելի գոհունակութիւնն, և ապա գոհացում մը փառասիրական ազնիւ դարգացումով՝ զգացման, — ըստ որում այդ կինն այլ եւս հանրութեան ծանօթ է, հանրածանօթ է։ Նազը Հանրմին համայն ազգէն պաշտուեցաւ ոչ միայն իրբեւ մայր Արքունի Տիկնայի և Վահան էֆէնտի, այլ և իրբեւ մայր Հովսիփեան սանուհեաց։ Տիկին Աննա Էտեան ոչ միայն իրբեւ Էտեան կրթասէր եղբարց մայր կը հռչակուի, այլ և իրբեւ մայր աղքատ ուսանողաց և ուսանողուհեաց, իրբեւ մայր Ս. Ներսիսեան սանուհեաց։ Նոյն աստուածային իրաւունքն ստացաւ նաեւ Իսկուհի Տէմիրճիպաշի, ամբողջ տասը տարին՝ մեր աղջկանց վարժարանին խնամակալուհի մայրն հանդիսանալով։

Երբ դեռ ողջ էր Տէմիրճիպաշի Պետրոս Աղան, — կրակէ մարդ մըն ալ այն Պետրոս Աղան՝ որ երկաթը կրակ կը դարձնէր և որ կրակն ալ պիտի կրնար երկաթի դարձնել, — երբ դեռ ողջ էր Պետրոս Աղան, երբ դեռ աղքատացած կամ թաղէն հեռացած չէին Հասգիւղի հարուստներն, երբ վեհաւոք այն Տիկինն՝ նուիրեալ բարեոյն ու ճամբարին՝ իւր սրահին մէջ կը հիւրընկալէր Արքունիներ ու Շահնազարեաններ ու վարժապետեաններ, Աղաթ օմեր և Ալթուն-Տիւրքիներ և փեշաւա մաճիկներ, այն ժամանակ, Հասգիւղի ու Տէմիրճիպաշիներու փարթամութեան ժամանակ, Իսկուհի Հանրմ ձեռքը կը բանար — տալու համար, տալու համար կարօտելոյն, որքին, որբեւայրիին, գաւառացիին ու մայրաքաղաքացիին, և՛ մարդասիրական անխորաղիր ոգւով Հայուն ու Հրեային։ Իսկուհի Հանրմ աստուածուհւոյ մը նման՝ ձեռքը կը բանար դանձեր բաշխելու ու սրտեր քնդ ունեւելու համար։ Ինչ որ հանդուցեալ Տիկինն հասարակ բարերարութեանց դասէն վեր կը բարձրացնէր, ինչ որ, այս' աստուածուհւոյ մը զայն բաղդատեալ կը կացուցանէր, այն էր թէ՛ իւր արդէն յարածամ բաց ձեռքն առաւել եւս բացուելու ճիգ մը կ'ընէր, երբ պիտի տար ոչ ամբիջ այլ անհետացուցիլ թշուառութեան՝ կրթութեան համար, երբ պիտի տար ուսանողաց և ուսումնարանաց համար։ Բարոյական բարձրագոյն յատկութիւն մ'ալ, որ ճշմարիտ բարերարութիւնը կը կացուցանէ, որ զմարդ կ'աստուածացնէ, և որով գերազանց աստիճանաւ օժտեալ էր Իսկուհի Տէմիրճիպաշին, այն յատկութիւնն է որ, աւա՛ղ, կը պակսի մեր Հայ բարերարներու մեծամասնութեան։ Դոքա կ'ուզեն պաշտուիլ, որպէս նախնի ժողովուրդներէն կը պաշտուէր արեգակն. այլ արեգակն իւր ճառագայթներն յընդհանուր կը տիւնէ՝ մթադոյն խորին խորշերն ալ որոնելով ու լուսաւորելով։ Իսկուհի Հանրմն ալ՝ յանձնարարութեան կամ ուղղակի խրնդրարկութեան վրայ միայն նպաստ չէր տար՝ հասարակ բարերարութեանց նման. այլ կը փնտռէր, մարդ կը փնտռէր օգնելու, վերանորոգելու՝ տուրջեան տիեզերանորոգ աստեղ նման։ Երբ հեռուէն Իսկուհի հանրմը տեսնէի, հակառակ անհուն համակրութեանս ու հիացմանս՝ փախուստ կու տայի, զի մի գուցէ՛ չփոթութեամբ մը՝ ինձ ալ օգնել ա-

առջարկէր և դիւստրաւայ վիրաւորէր:

Տէմիրճիպաշի Պետրոս Աղան երբ դեռ կենդանի էր, ըսի, Իսկուհի հանրմ ձեռքը կը բանար տալու համար: Երբ, երկարատեւ հիւանդութենէ մը յետոյ գերեզման իջաւ իւր ամուսինն, Իսկուհի հանրմ ձեռքը բացաւ — առնելու համար, առնելու համար յանուն որոց, յանուն այրեաց, յանուն կարօտելոց, յանուն ուսման և ուսանողոց, իւր ձեռնարկած ամեն հանգանակութեան մէջ՝ աւելորդ է ըսել՝ ինքն հատուցանելով մեծագոյն բաժինն յաւէտ: Ասկէ տեղ էր Իսկուհի հանրմ, իր զաւակաց ու թոռանց և իր գերդաստանին՝ այդ անխոնջ խնայողին կնոջ աջակցութեան կարօտ բոլոր անդամոց հոգերուն հոգատարութեան համար, և թէ, այո՛, օգնելու մարդ վնասելու համար, մարդասիրական ու կրթատրական գործոց ի նպաստ հանգանակութիւն ընելու համար, գործելու, բարեգործելու, սքանչելագործելու համար: Հոս էր այս վայրկեան, ու վայրկեան մը յետոյ՝ ոտքով թռչող թռչուն՝ թաղին միւս ծայրն էր, ու ժամ մը յետոյ՝ համայնաթաղեցի՝ ուրիշ թաղ մըն էր, կենդանութեան կարմիր երեսէն ցորացնելով ախրամած դիմաց վրայ, կազդուրման կրակն աչքերէն ցայտեցնելով վշտաւ հոգիներու մէջ, հոծ ու բոց քրտինքն իր անբիծ ճակտէն հոսեցնելով ու... քարերէն Արաշամու որդիներ յարուցանելով պիտ' ըսէի, այնքան կենդանաւորդ կայծակնացայտ կրակակերպ էր հազուամիտ այդ կինն:

Եւ այդ հնոցէն ինչ որ կը մնայ, այն աւտիկ: Պրոմէթէոս — կ'աւանդեն նախնիք — երկնքէն գողցաւ հուրն. և վրէժ արդեօք կը լուծեն երկինք՝ մենէ գողնալով կրակէ կինն՝ Իսկուհի Տէմիրճիպաշին: Չարագանցութիւն կ'ընեն միթէ, Տեա՛րք. է՛հ, թող այդ կինն Արեւմտեան կիսագունտին վրայ ծնած ըլլար, և պիտի տեսնէինք թէ ո՞վ էր և կամ թէ ի՞նչ էր այն: Յաւելտ իւր տեսլանէն ազդուած եմ ես սաստկապէս, որպէս կ'ազդուի մարդ հրաբուխի մը կամ ովկէանեան յորձանքի մը տեսլանէն: Ու ո՛ր կ'եռար ու ո՛ր կը վառէր, հրաշունչ կ'ընէ բոցափայլ, վայրկեան մը յետոյ սեւ հողն իր ներքեւ ու պաղ քարն իր վրայ պիտի ունենայ, աւա՛ղ: Եունչը զնաց օգին՝ Տէմիրճիպաշի Իսկուհի հանրմին, ու հուրը գնաց արեգական՝ հրոյ հրաշափառ հնոցին. միմիայն մարմինը — ցո՛ւրտ հեղունութիւն — կը մնայ մեզ Իսկուհի հանրմին. մարմինը, զոր յամր յամր մօայլ փոխն մէջ պիտ' իջեցնենք, հարցնելով — մինչ քահանայն մահուան սաղմոսները կը մրմնջէ — հարցնելով թէ ի՞նչ է կեանքն և ի՞նչ է մահն...:

Այլ... հարկւրամեայ քահանայն, որոյ մարմինն երեք ամիս առաջ յանձնեցինք այս հողին՝ մեր ամենէն տաք արտասուօք լուանալէ ու տաճարին բոլոր սուրբ իւղերովն օծելէ յետոյ խնկարոյր խնկելի այն մարմինն, Արծրունի քահանայն չը տարակուսեցաւ երբէք: Աստուծոյ չը հարցուց՝ «Ի՞նչ է կեանքն», և ո՛չ անդնդոց ոգւոյն՝ «Ի՞նչ է մահն»: Հապա սիրեց կեանքն, արհամարհեց մահն, և հաւատաց Անո՛ր՝ որ կեանք կու տայ մարդոյն, որ անմահութիւն կու տայ բարեբար մարդոյն, որ մեռելոց ալ՝ որպէս ամի ամի բնութեան՝ կու տայ նոր կեանք ու յարութիւն:

Իսկուհի Տէմիրճիպաշին յարութիւն առած է արդէն: Ս. Ներսիսեան վարժարանն ունի ծաղկահասակ նախկին աշակերտուհի մը մար-

դասէր և ուսումնասէր, որ խոնարհեցաւ՝ ձեռք բացաւ ազքաւ ուսանողուհեաց համար, որ ամբողջ մեծ պահքը ձեռքը շարժեց ազքաւ ուսանողուհեաց զգեստուց համար, որ մեր վարժարանին մէջ ամեն օր իր ճարտարամասն ձեռքերը կը շարժէ՝ հոգեկան դաստիարակութեան հզօրացման նպատակով այն երաժշտական երկնադարեւ արուեստն անձնութեամբ աւանդելու համար, որ՝ հուսկ ուրեմն՝ ամեն տօնական արձակուրդէ յետոյ ձեռքէն կը բռնէ Ս. Ներսիսեան վարժարանին ալիճաղիկ բարերարուհեոյն և կը բերէ վարժարան Տիկին Աննա Կասեանն: Յարութեան Աւետարանն եկեղեցւոյն մէջ կարգացուեցաւ կիրակի. «Ղազարոս մեռաւ և ես ուրախ եմ»: Իսկուհի Տէմիրճիպաշին մեռաւ, և մենք ուրախ ըլլանք, Հապա՛ղցի հաւատացեալ եղբայրք, քանզի յանձին Օրորդ Դիւրեմիսի Գալուստեանի՝ յարութիւն առաւ Իսկուհի Տէմիրճիպաշի:

ԵՆԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Շ Ե Ր Ա Մ Ն Ե Ր Ը

Թ Թ Ե Ն Ի

Քանի մը տարի առաջ Պաղչճիկ երթալու ատեն, Իզմիտի ծովեզերքը շատ մը վառելու փայտեր տեսայ և հետաքրքրութեամբ հարցուցի թէ՛ ի՞նչ էին ու ինչո՞ւ համար փետտուէր էին անոնք. մեծ եղաւ վարմանքս ու կը հաւատամք, զրեթէ ցաւ զգացի երբ ըսին որ թթենիներ էին անոնք, զոր տեղացիք՝ շեւրամներու օր ըստ օրէ փճանալէն յուսահատ հաներ և տեղը ուրիշ բաներ անկեր էին:

Մեր երկրին հարստութեան գլխաւոր, կրնամ ըսել առաջին աղբիւրը շեւրամաբուծութիւնն ըլլալով հանդերձ, երբ փոխանակ աւելի զարկ մը տալու անոր, Օսմանցի մը երեսէ ձգուած կը տեսնէ վայն կրնայ չյուզուիլ, կրնայ անտարբեր մնալ. — չեմ կարծեր: Իրաւ է որ շեւրամներու հիւանդութեանց պատճառներուն մէջ թթենիի տերեւներն ալ ունին իրենց բաժինը, բայց ներքի չէ բնաւ տեղացի ժողովուրդին այն կարծիքը թէ՛ այդ հիւանդութեանց միակ պատճառը տերեւներն են միայն: Եւրոպացիք թէ եւ մեզմէ վերջ ծանօթացած են շեւրամներու, սակայն ամէն բանի մէջ մեզմէ աւելի փորձառու, կը հաստատեն թէ՛ թթենիին հիւանդութեանց պատճառ ըլլալու յատկութիւնը՝ ուրիշ շատ մը պատճառներու քով աննշան բան մըն է, մանաւանդ որ այդ պղտիկ յատկութեան առաջին առնելու միջոցները չեն պակսիր:

Որպէս զի թթենիներու վրայ մեր ունեցած նախապաշարումը անհետի, աւելորդ չեմ համարիր հոս քիչ մը գործնական ծանօթութիւն տալ թէ՛ նոր ծառերն ինչպէս պէտք է պատրաստուին, և թէ արդէն տընկուած ծառերէն ի՞նչ կերպով տերեւներ պէտք է առնուին: Այս ծանօթութիւնները եթէ ճշգրտութեամբ գործադրուին, յուսալի է որ տերեւներու իրեն պատճառ հիւանդութեանց վերադրուած թերութիւնը կ'օրոնցնէ իր արժէքը:

Թթենիի շեւրամահունտին հետ Չինաստանէն դուրս հանուած է: Իր զանազան տեսակներուն մէջ՝ շեւրամներու համար է՛ն ընտիրը ձերմակ թութի ծառն է: Այս տեսակէն ծառեր հասցնելու համար թէ եւ կան այլ և այլ միջոցներ, պէտք է սակայն գիտնալ որ

լուաղոյնը՝ գետնի վրայ ցանուած թութի հունտէն գոյացած ծառն է: Թէ եւ այս կերպով յառաջ բերուած ծառը քիչ մը ուշ կը հասնի, բայց աւելի դիմացկուն և իր տերեւն հիւանդութեան պատճառ ըլլալու ենթադրեալ յատկութենէն զերծ կ'ըլլայ:

Նոր ծառեր հասցնելու համար՝ թութէն սերմ առնելու յատկացուած ծառերու տերեւներուն ու պտուղին բնաւ դաշկըւ չէ նոյն տարին, որպէս զի թութին հունտը աւելի մեծ և աւելի ուժով ըլլայ: Այս թութը շատ լաւ հասունցած ալ ըլլալու է, կամ ինքնիրեն և կամ զինքը կրող ճիւղին թիթեւ հպումով մը գետնին խնայու չափ:

Այս տեսակ թութերու է՛ն մեծերէն պէտք եղածին չափ մաս մը նոր ամանի մը մէջ դնելով վրան ջուր լեցնելու և կամաց կամաց ձնելու է. հոնոր դուրս կու գայ տակաւ ու տկարները ջուրին երեսը կ'ընեն. և երբ ջուրը փոխուի մերթ ընդ մերթ, այդ տկարներն ալ դուրս կը թափուին ու ամանին յատակը կը մնան միայն է՛ն ուժով ու ծանրկեկ հունտերը, որք ամենէն պատուական սերմերն են:

Այս կերպով սերմը առնելէ ետքը շուք տեղ մը դնելով չորցնելու է. չորնալէն անմիջապէս ետքն ալ եթէ ցանուի, իրաւ է որ տարի մը չահուած կ'ըլլայ, բայց պէտք չէ մոռնալ «Շատ ազահութիւնը շատ փնտ կը բերէ» ի առակը. գէթ այս մասին՝ ժամանակին համար ազահ ըլլալը ներքի չէ. սերմը եթէ չորցուելէն անմիջապէս ետքը ցանուի, (ժամանակը ճիշդ հիմա է) նոր ելնելիք տունկերը մէկ երկու ամիս ետքը ձմրան սաստկութեան կ'ենթարկուին ու հաւանաւ կանադար կը փճանան: Հետեւապէս աւելի լաւ է որ սերմը չորցուելէն ետքը պահուի մինչեւ յառաջիկայ Մարտ ամիսը:

Սերմը ցանելու համար պատրաստուած գետինը ստիպ ստիպ ջրուելու յարմար ըլլալու է: Հողը երկուքուկէսէն երեք ձեռնաչափ խորութեամբ փորելէն վերջ, ուռեցնելու ու իրարմէ կէս կէս կանգուն հնուր և չորս հինգ մատնաչափ խորութեամբ չըջանակներ կազմելու, սերմը անօտարակէս (սէյրէկ) այդ չըջանակներու մէջ ցանելու և վրան հողով ծածկելու է: Օգերը եթէ չոր երթան՝ պէտք է ցնցուղներով ջրել սերմը պարփակող գետինը:

Կեղրոնական Ասիայի մէջ տեղական ժողովուրդը նախ կարգ մը եղկապտայորեն, կանեփ (քէնտիլ) և քթան (քէթէն) կը տնկեն ու անոնց հարաւային կողմը կը ցանեն թութի հունտը, որով այս վերջինին ծնունդ տուած տունկը առաջիններուն հովանիին տակ աւելի պաշտպանուած գիրքի մը մէջ կ'աճի ու կը մեծնայ:

Սերմէ յառաջ բերուած տունկերը եթէ չպատուաստուին՝ վայրի թթենիներ կ'ըլլան, իրենց տերեւները կախուղ ու սառնոց ծայրերը՝ բանուած տանթէլայի ձեւով սուր բոլորակաւ ձեւ կ'ըլլան: Շեւրամներու համար է՛ն ընտիր տերեւներն ասոնք են. պատուաստուած ծառերու տերեւները շատ ջրոտ ըլլալուն՝ վերիններուն չափ անդարար չեն ըլլար:

Թթենիի տունկը երբ բաւական մեծնայ, պէտք է հանել իր տեղէն ու թթենիներու յատուկ պարտիւլին մէջ տնկել իրարմէ մէկ մէկուկէս կանգուն հեռաւորութեամբ: Այս տեղափոխութեան ատեն բաւական զգուշութիւն պէտք է տունկին վնաս չբերելու համար. նախ՝ անոր բոլորակը լաւ մը փորելու, ջրելու և ետքը հանելու է զայն: Մարտի մէջ տնկուած տունկերու արձակած ճիւ-

դէրը յաջորդ տարիի նոյն ամիսին մէջ կտրե-
լու է, որպէս զի սրմատը աւելի ոյժ տանէ :
Եւ յորոք կամ երրորդ տարիին մէջ միայն, տե-
րեւները տանելու ու շերամներուն կերցնելու
է : Թուիլի պարտեղին լաւ խնամք տանելու
միակ միջոցը՝ ստեղծ ստեղծ ծառերու բոլոր-
ակքը փորել ու ջրելն է : Վայրի թուիլը պատ-
րաստելու եղանակը ստիկա է : Եւ ինչպէս որ
բնիկը՝ ասոնց տերեւները շերամներու համար
աւելի անդադար ու աւելի յարմար են, քան
պատուաւորած ծառերու տերեւները : Իրաւ է
որ որկրամիջ շերամները աւելի կը սիրեն և ա-
ւելի ախորժով կ'ուտեն ջրոտ տեղերու միայ
պատրաստուած, ստեղծ ստեղծ յապաւուած
(պատանդի) և պատուաւորած թթեւներն-
րու տերեւները, բայց ասոնք կը թթեւին ի-
րենց պզտիկ ու փափուկ ստամոքսին մէջ, և
հիւանդութիւն կը պատճառեն :

Հիմա վայրի թուիլ հասցնելու համար
պէտք է որ մեր ունեցած թթեւներուն տե-
րեւները չեն, անոնք չուտով կը հպառա-
կին մեզի : Եթէ կ'ուզէք, երեք ջրոտ տարի
առանց յապաւելու թարուցէք, պիտի տեսնէք
որ անոնք իրենք իրենց կը վայրենանան ու
իրենց տերեւներն ալ վայրի թթեւներու
տերեւներուն պէս անդադար և հիւանդու-
թիւնաց պէտք գտնուի կարող կ'ըլլան :

Նոր պատուաւորած թթեւներու տե-
րեւները ամէն պարագայի մէջ պէտք չէ բնաւ
կերցնել շերամներու : Եթէ երբեք անհրա-
ժեշտ պէտք մ'ըլլայ տախի, այն տեսն գտնի
վայրի թթեւներու տերեւներուն հետ խառ-
նուած տալու է :

Թթեւներու համար բնաւ... յապաւուած
պէտք չէ պիտի բռնէ, բայց գիտեմ որ շերա-
մաբոյժները իրենց գիտցած էն ետ չպիտի քաշ-
ուին, որովհետեւ յապաւուած թթեւին տե-
ւելի շատ տերեւ կուտայ, ու ամէն մարդ իր
չափը գիտէ, հետեւաբար առայժմ աստանի
յանդուղն յանձնարարութենէ մը ետ կը
կենան :

Յ. Մ. ԱՅԼԱԻՈՐԵԱՆ

ՆԱԿԻՆԻ ԲԵՐԲՈՒՆԷ (3)

ՄԵՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԱՆՃԱՐԱԿԻՆ ՀԱՐՍՆԵՒՈՐՆԵՐԸ

ՀՈՒՄ ԱՂԲՈՐ ՏՈՒՆԸ

Ճիւղացաւ բռնել և անոր վրա աչքերէն սիրաւ
բռնեցած բերնէն անանի խօսք մը փախցուց
որ ասորուան աղջկաներուն «Էս քեզ կը սի-
րեմ» խն հաւատար է : աս տարբերութեամբ
որ՝ Օղիկ կեանքին մէջ միեակ Մըլըրը ճանչ-
ցած, Մըլըրը երազած : Մըլըրը սիրած էր,
և Աստուծոյ օրհնով Մըլըրին ըլլալ կու-
գէր : Կուզէր որ ամենուն պարծենայ և ժա-
մառն վերադառնալը երբ կ'սկսէր հարցնեն,
— Իմ գլխաւորս Մըլըրն է — ըսէ : Եւ երբ
ամենքը բերնէն ջուրը փայցնելով — Վա՛յ,
ան աննման Մըլըրը — բռնէ, իրեն ալ սր-
տիկը կը կապէ : Բայց տախի, բաները այս-
պէս, աստ՛ չեն երթար : Նոյն խոհանարան
ներս մտաւ թէ չէ — Նորէն ինչ է, ֆրիլըր
ֆրիլըր օտքիս տակ կը դառնաւ կը կենաւ,
զոյժ է վերջինին ուրիշ բան մը բրած չունի
եւ — ըսաւ մարիկը :

Դուրս չալուեցաւ, ցատկեց որ բանայ,

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԷՖԷՆՏԻ ՉԱՄԻՉ

Յովհաննէս Էֆէնտի Չամիչ, ծնած էր 1821
Օգոստոս 22ին, և վախճանեցաւ 1884 Հոկ-
տեմբեր 17ին : Թաղուամբ Եփէլի է :

Իւր կրթութիւնն առաւ՝ Հորաբըրքը՝ Տի-
րուհիցա Հանրակն ամբարշտատ դաւակացը
հետ : Երկու հարապառք կանուխ սրբ մնա-
ցած լինելով՝ խնամատար մը պէտք էր իրենց :
Որբախնամ Հորաբըրքն և նորա ամուսինն՝
Ալլահվերտի Աբրահամ Ամիրայն իրենց սեպուհ
պարտաւորութիւն համարեցին խնամեալ դաս-
տիարակութիւն մը տալ այս զոյգ մը Չամ-
իչի անչափահաս որբերուն : Յովհաննէսին
և Գրիգորին :

Հ. Աբալէն Կոմիտաս Բագրատունին՝ Տիւզ-
եան և Ալլահվերտեան աղետագործ տանց
հայրերան դաստառուն էր : Ուրիշ մասնաւոր
դաստառներ ալ ունէին Տաճկերէնի և Ֆրան-
սերէնի ուսուցման համար : Սակայն Յովհան-
նէս Էֆ. Չամիչ՝ Գաղղիերէն ուսմանը սկսած
էր Թարապիլայի Գաղղիական դպրոցին մէջ, և
յետոյ Միւզիլուու փաշային և Թագուրեան
Պօլոս Էֆէնտիին ևւս դաս առած էր : Ինչ-
պէս նաեւ Տաճկերէնը՝ Նախապէս Հանկնոտ
Գրիգոր Էֆէնտիին սկզբնաւորած և ապա Բէ-
շտ և Խաճէմ Իւլմա Էֆէնտիներէն կատա-
րելագործած էր :

Չամիչ Յովհաննէս՝ բնածին աշխատաւի-
րութեամբ իր ուսմանը զարգացեցած էր,
և պատրաստ՝ կենաց պայքարներուն, երբ
Տիւզեան Կարապիտ պէլը գլինքը ներկայեց
Տէրութեան, իր յարմար պետական պաշ-
տօնեաց :

Չամիչ Յովհաննէս Էֆ. Սպարապետու-
թեան Դրան մէջ պաշտօնի դուրեւրով, հետ-
զհետէ իր անունն ու համբաւը փայլի սկսաւ
իրբեւ երեւելի տաճկադէտ, աստ՛ յետագայ
համարակալ և փորձ հաշուադէտ, այնպէս որ
իրեն յոնձնուած պաշտօններն անթերի կը
կատարէր, ու կ'ործանանար միշտ բարձրա-
զոյն գոհունակութեանց :

* *

չախ մըն ալ եղբորմէն կերաւ :

— Բա մի ինչ է, Մըլըրը միամիտով թու-
ղեր ամենքին ալ վայր էր ինքնը :

Ինչ և է, կըր սեղանը սենեակին մէջաւել
գրին, անոր բոլորակը կարողով գեալներ նըս-
տան : քիչ մը ջուրի մէջ կ'փած ձուկ, քիչ մը
սոխ, քիչ մը պանիր, պահածու բաները բոլոր
դուրս էին հաներ : Օղորեկ՝ Մըլըրին հետ
դէմ գլխաց ինկաւ : Խենդ աղջիկ, համար-
ձակութիւնը բոլորովին գացեր էր, արդեօք
Մըլըրը միտքէն ինչ էր ըսեր, զորք չնեմ բ-
սելով տրեր էր : Գլուխը փար կախեր աչ-
քերը վեր չէր տաներ, երեսները որ բռն
կապարկը կրակ էին կտրեր :

Ան տեսն սովորութիւն էր որ սեղան
նստելէ աստ՛ տանը պզտիկ «Հայր մեր»
մը կ'ըսէր : «Ճաշակեցուք» խօսքը խաչը
հանողը հացի կ'սկսէր : Աս պարտքն ալ Օղա-
րերին կ'ընէր, մինչև ան որ միտքէն անցած
չէր որ մեծցեր է, հիմա որ գլխաց Մըլըրը
նստած տեսաւ, արձան կարեցաւ մնաց : ար-
բարը գլինքը սարսփը մշտեց, — Է՛ հացալ, Օ-
ղիկ — ըսաւ : Նայեցաւ որ ըլլալի բան չէ,

— Աս ըրածդ գաւն միտքդ պահէ — ըսաւ կա-
մայուկ մը և աւելի բարձր ձայնով — Է՛ որ ու
կը կենաք կար, հրամայ նայինք, մի քաշուիք
Մըլըր, խաչը հանողը հացը ուտէ ըսաւ :

Չամիչ Յովհաննէս Էֆ. 47 տարիներ ծա-
ռայեց Օսմանեան կառավարութեան, այլ և
այլ պետական փափուկ պաշտօններու կող-
ուելով յաջորդաբար :

16 տարեկան էր՝ իւր անունն շնորհիւ
սկսաւ, երբ իր թարգման Սպարապետու-
թեան գրասենեակին, Ֆրանսերէնէ Տաճ-
կերէն թարգմանեց վնասարական բարենո-
րոգմանց վերաբերեալ դիւանար և գլխական
երկերը :

Համարակալի և հաշուակալի համբաւն տա-
րածուեցաւ երմախան և գանձային յանձ-
նաժողովներու մէջ տարած աշխատութիւն-
ներովը :

1859ին ընդհանուր քարաուղար եղաւ
վճարմանց սնտուկին, և յետոյ՝ աստ՛ ընթրիս-
տոնեաց Մուալլինը կամ Մորհըրախանը ելեւ-
մտից նախարարութեան :

Մամուաւը Երեսմախան պաշտօն ընդու-
նեց եւրոպայի համար, կատարարութեան կող-
մանէ հաշուեքննիչ եղաւ Օսմանեան կայսե-
րական պանքային մաս :

Հանրային հաշուակալութեան Հաշուեքն-
նիչ, Տնօրէն՝ Ընդհանուր պարտուց, Անդամ
Պետական խորհրդայ, աստ՛ մեկայ Տնօրէն՝
Անուգրակի արոց, Նախարար՝ Հանրային շի-
նութեանց, Նախարար վաճառականութեան
և երկրագործութեան, և վերջապէս Նախա-
գահ Հաշուակալութեան գլխակին :

Չամիչ Յովհաննէս Էֆ. կը բարձրանար իր
փարած պաշտօններով, այլ չէր հպարտանար
իր գիւրջով, և չէր փախեր իր սովորական
ընթացքը :

Արնավուտ գիւղ կը բնակէր : Ամբան մէջ
շատ անգամ պառլոտ կ'ընէր ընդհանրապէս
մինչև Բուսմէլի-Հիւսար, հանդիպելով Ահմէտ
Վէֆիկ փաշայի, որուն մտերմին էր կանու-
խէն, և նորին բարձրութեան հետ գործի
սկսած էր Սպարապետութեան Դուրս մի և
նոյն գրասենեակին մէջ :

Ուշ տունն արոյացնէ տուն վերադառնա-
լով, իւր բնիկ երգանութեան կ'սկսէր մինչև
ճաշի տուն :

Չեմ գիտեր Մըլըրին խեղճին ինչ փչեց :
— Ծո՛ւ սղորար, բաւ, բերնիս պատառը ին-
տոր փար կ'ըլլայ, քոնի որ լակտարիներս միտքս
կը բերեմ նէ : հիմա աչքերմէն դառն է, հա-
րիկ կ'ըսեն կը կենան :

Տեսնելիք բան էր Օղիկը աս միջոցին, և-
րեաները կարմրեցան կարմրեցան, սկանջնե-
րով մէկանց կապարկը կ'ըսաւ, մէյ մըն ալ
պրկուեքը գեղեցեցան գեղեցեցան, երեսը խու-
կի գոյն գալձաւ, գգալը ձեռքէն ինկաւ :

— Մարիկ, բան մը կ'ըլլամ կոր, ըսաւ ու
աչքերը գոցեց մէկ կողմին վրա : Կուտարեւ
տուտուն յանկարծակներու եկաւ, աղջիկը
ձեռքէ կ'եկար կոր :

— Չաւախ, Ապառնոյ սիրուն՝ ճար մը
ճարակ մը, վախ իմ մէկ հաւախիս, չի հասնի
աս օրերուն, ինչ կ'ըսար անուշիկս :

Մըլըրը որ աս տեսնուն պատճառն էր,
տանէն Էֆէլ ինք իրար անցաւ, խեղճ աղջ-
կան ոտքը ձեռքը ստաւ էին կտրեր : Աղքատ-
ները կ'ըլլան չեն կրնար լսելի — աս լեռնե-
րու վայրի չուան խեղճ աղջիկն ալ շատ բան
զգացած էր, ու հիմա որ աստ՛ութիւն տարե-
կան արիւնը երկու տեսնէր, իւր սիրած
մարդուն բերնէն իր մահաւան վճիւր արդ-
եօք կը ըսէր, մէկէն բռնէր էր, միմէ մե-
կէն պիտի մարէր :

Օրը մէկ անգամ միայն կը հաշէր երեկոյնն : Բնութեան պահանջները և դժուարահաս չէր կերակրոյ մատին : Ինչ որ կ'իյնար իւր, ախար ժողով կ'ուտէր :

Տնտեսագէտ էր : Չէր սիրեր ցոյցեր և չօշակոյն բաներ, և իր անձնական հանգիստը համար չէր ուզեր ծախք բնել : Բայց իւր ընտանեաց բարօրութեան համար ոչինչ կը խնայէր, և աւելի հանգիստ կ'ըզար ընտանեկան անձուկ չըմանալի մէջ տարիլ, խոյս տալով զիւրանալական հրաշքներէ, ընտանեկան երեկոյններէ և պաշտօնական պարահանդէսներէ :

Յայտ քաղցրաբարոյ և կարի հիւրասէր էր : Բազում բարեկամներ ունէր կառավարական բարձր չըմանալներու և մանաւանդ իւր մասնակց մէջ, այլ քիչ այցելութիւն կ'ընդունէր :

Իւր զբօսանքն էր խաղալ մանուկներու հետ, զգուշիկ դանդաղ, կատակներ ընել, սրկոցներ և դուարձարաններ :

* * *

Չէր մասնակցեր այն զբօսանքներուն, կրկն կը կարծէր որ իր անողջութեան և պատուոյն փրկան կրնան բերել :

Իրեն համար չէին սրճարան, գարեջրատուն : Հոն անցնելու ժամանակ՝ զրական աշխատութեան կը նստիլ, կ'ըսէր :

Անկողնէն ելածին պէս կ'սկսէր դործի, մինչև նախաձեռն ժամանակ, որ կ'աւելի սուրճէ միայն կը բազմանար, և յետոյ կ'երթար առանձնանոց իւր գրասենեակը :

Կիւրակէ՛ օրերն առանց մոլեռանդութեան կը կատարէր իւր կրօնական պարտականութիւնները, և կրկին գրասենեակը կ'առնէր նոյնպէս մինչև ժամը 9, — որ տակն ալիս առնէին սուրճ և զգուշիկ մը անուշիկէն — կարծես նոր ուժով շարունակելու իւր գրական աշխատութիւնները :

Ուրախ զանգուտեան օր չէր իրեն համար : Իւր սովորական աշխատութեան օրն էր : Նախընտրած ուսումնասիրութիւնն էին զանգուտեան խնդիրներ և քաղաքական անտեսողութիւններ :

Աշխատութիւնը կը տեսէր շատ անգամ

մինչև կէս զիշեր, և երկրորդ աւուր դործ կամ խնդիր չէր թողար, որ մաքին մէջ գէթ լուծուած չըլլար : Ինքը կը սիրէր աւելի հաստատել իւր աշխատանքը քան ուրիշներու խօսքին : անոր համար իր պաշտօնատան դործերուն կ'ուզէր խիստ մօտէն և անձամբ իրազեկ լինել, և այս էր անոր դործերուն շատութեան մէկ պատճառն ալ :

Բոլոր մտադրութիւնն եղած էր լինել անձնուէր կառավարութեան և իր պաշտօնին ներքէ, և ասոր յաջողած էր կատարելապէս, իր անընդհատ աշխատասիրութեամբ, որով պատկանելի եղած էր ամենուն : և իւր խօսքը միշտ կըլլաւ ունէր գատուութեան և ուղղամտութեան պատճառաւ :

Յովհաննէս Էփէնտի իւր այս բազմազան դիմաւոր մէջ իսկ յօդուած և տպագրել տուած է Թրքերէն ընտիր Տրամաբանութիւն մը և Մաթեմատիքի երկասիրութիւններ :

* * *

Չամիչ Յովհաննէս Էփէնտի հեղ էր բնութեամբ, և միանգամայն արի՛ իր համոզմունք ի դործ դնելու համար :

Նկարագրի տէր մարդ էր, և այլոց դնահատութիւնուն մեծ կարեւորութիւն չէր տար :

Պարտաճանաչ էր բառին ընդարձակ նշանակութեամբ, ու որ և է խոյ և խոյ չէին կրնար ընկրկել զինքը պարզէն թերաւոր, թէ՛ լինէր այն նիւթական կամ բարոյական :

Իր աստիճանակիցներն այս բանին կը վկայէին, զի փորձով ցոյց տուած էր իր բարձր աստիճան բարեկամներուն մէկուն զուտկութիւն մը յայտնելու առթիւ, երբ հանդերձեալ էր մեկնել Վասպուրի Երասխանի ստիւնքէն :

Նոյնպէս իրեն բարեացակամ չի դառնուողներուն կ'զգացէր դործնականագէտ՝ իր խորտու արհամարհանքը :

Իւր այս բնութիւնը որչափ ալ շատերուն հաճելի չէրէր, բայց Օսմանեան ոստանին մէջ Նորին Վսեմութեան ծանուցեալ անաչառ, անկեղծ, արդարաւոր և ուղղամտ բնութեանը համար ցարդ պատուաբեր կերպիւ կը յիշատակուի Յովհաննէս Էփէնտի անունը՝ արագեալ Ազաթն Գրիգոր Էփէնտի

հետագա Գումգարուէն, Լտին թողելով իրար անցած ու չուրած երեք հոգիներ, որոնք չէին զիտեր թէ տար կարք ուր տիտի երթայ :

ՉԼԻՍԱԼԷՆԻ ԽՐՃԻԹԸ

Մրկելին մօրը աչքը դուռն էր մնացեր, եկող դաշու չի կար՝ սէր էր դաշեր գաւաղը, ինչուն կ'ուշանար, նորէն ուժ մեկուր մտեր էր : Կամաց կամաց Չրկապրի լուսկը վառեցան, մէկ քանի ուշ մնացած զինովներ՝ աս պատը իմն աս պատը քաւիլ, մէկ կողմէն միւսը դարձեալ վեր կ'երկային : Անոց մէջ տեղ մէկըն ալ Պետոն անկուեցաւ, ինքնիքին խոյ մը յարմարեցեր կ'երգէր, «Չարմուէցայ աս զիւրաքի Գոհարին, ինչ աղաւթ է, աչքերը լուս կը վառին» :

— Վո՛ւյ մէկէն ձանդ լանուի, աղաւթ ալ հոս չի օր տօնացը ցներ, նայէ մէկ մը սրտը ըրածը :

— Մարիկ, բառ Գոհար, ինչուդ ոչկար է, խեղդին խօսքերուն տկամը կ'աւելի ուժի :

— Աղջկիս, աս քաղաքի ըրան է, կը խմէ կը խմէ, երկուքը մէկ մը դուռն ի վեր կու

հետ, որ մի և նոյն տունն իրարու դադարում լակից էին և սերտ մարմնութիւն ունէին :

Չամիչ Յովհաննէս Էփէնտին կը յիշեցնէ այսօր իւր ազգատոհմի պայտաւորներէն՝ վերայիւր վաղամիտի Յակոբուն կրտսեր հաւաքատ Ազնաւաթ Չամիշեան Յարութիւն է՝ փէնտին, որ Բարիպու Մուրաթեան վարժարանի յաւաքագէտ աշակերտներէն էր, և որ այսօր Օսմանեան դանդաղէն մէջ կ'արեւոր զիշք մը կը բռնէ իւր ծանուցեալ տաղանդով և փորձառութեամբ :

Ա. Յ. ԱՅԼԱԶԵԱՆ

ՄԱՍԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՏՔԷՆ

Երէկ ճիւղ հինգ տարի, եղաւ որ բարի մամիկս երկինք դնաց... Ե՛հ, այո՛, երկինք դնաց ոչ թէ մեռաւ, օրովհետեւ «մեռաւ» բառը զոր անխորադար ամէն մարդու համար կը գործածեմ, կը կարծեմ թէ իւր մէջը տեսակ մը կուտայ իւր, տեսակ մը զգուեցուցիչ բայերուն, զոր բնաւ չեմ կրնար կցել այդ գերազանցապէս սուրբ ու ամենէն աւելի Աստուծոյ մօտ եղող պարտի անունն :

Ա՛հ, ինչ կին էր ան, մարդ չի կրնար զխնայ : Աստուծոյ շափ համբերող, հրեշտակի շափ անմեղ, անխաշար և աղաւթի մը շափ միամիտ էր : 70 տարեկանու տակ կորացած այդ սրբուհին հրաշքի մը մարմնացումն էր, ծով էր իւր հաւատքը, ակիւնաւ էր իւր սիրտը : ամէն բան կը սիրէր, բան մը չէր տեսէր : Կեանքի ալիքներու հոսանքին առջեւ քշուող փետուր մըն էր, ալիքներու կատաղած ատեն շատ անգամ անկ անդունդներ ալ ինկաւ, բայց առանց աղաւթութեան համար ճիւղ թափելու՝ անշարժ աղաւթ մինչև որ վերին Չեռքը խեց զինքը այդ անդունդներէն : Տան հոգին էր, տունը իւր տիեզերքն էր, եթէ այդ լուսնիկն արտին մէջ կար փափաք մը, այդ ալ բնաւ իւր տան սեմին դուռն բան մը չէր : Բնաւ շտապ որ օր մը բարկանար, միշտ կը ներքէ : Եթէ տեսնար ընտանութիւն իրեն դէմ՝ կը նստէր

դայ կը դնայ : չի սատկեցաւ օր ծառքէն աղաւթի :

— Հոգիդ սիրես մարիկ, սատկեր նէ բաւառնէր մէրա՞ս պիտի ուտէինք, ինչուդ պէտք աս նա կ'անիծես, հոգիդ կը սեւես, ամէն մարդուն մեղքը իրմէ կը հարցնեն :

— Է՛հ հասկցայ, քեզի օր մնաց դուռն ալ կը պանասս ստ կինով չունը ներս կ'առնես, անանկ չէ :

— Ինչուն ներս պիտի առնեմ կ'ըր, ուրտալը ամենուն է, ու՛մ կը խառնուի, որո՞ւն բերնին է ինկեր : Թող ուղածին պէս պտուտի :

— Է՛հ հասկցանք, լեզուդ քեզ քաշէ, նայէ օր սրտըդ դայ նէ բռնաներ չընէմ :

— Ը՛տ, բո՛ւ, աս տունն նէ՛ կս պակսեցայ նէ՛ կատուն, երկուքը մէկ մը սիրտս կը կըմտցնէր կեցեք :

— Է՛հ հիմա ի՛նչ բնէր Գոհար, կրնար քեզի երկի տեղեկներ :

Աղջկիւր աս խօսքին ալ չի խօսեցաւ, վար խոհանոց իջաւ : Պետոն ձայնն ալ հետէն հետէ հաղիւ կը լուսէր, հիմա անշուշտ տուն հասած բլբլու էր : Փաղցեցեր մարդ մարդարանք չի մնաց, մտերը սոյլին անդին սկըտան մարիկ, ձան ձուն ջրար միայն այն բնութեան մէջ : Զանկերուն քրտաքր քրտաքր մէկ (Նորմալիտ)

— Ա՛խ իմ անմահական, բառ խեղճ մարիկ, քեզ աշխարք բերելիս ի վեր՝ զլուսա կը ցաւի մը չէիր ըսեր, ա՛խ ինտոր պատճառ էդոյ, էս ձեռքովս քեզ մեռցուցի, բառ խօսքերս սիրող մի դրիւ, ա՛խ, լուս լուս, աչքերդ բաց աղջկեանկ, չէ նէ աշխարք ինձի համար մով գնաւն կ'ըլլայ էս ալ կը մեռնիմ :

Բայց Մրկըր որ ալ տղէկ մը հասկցեր էր աղջկան ցաւին պատճառը, փետուրի մը պէս բազուկներուն մէջ վեր վերայոյց աղջկիւր, կտրծբին վրայ սկսեց անկիւս, հակառէն պաղաւ և դառնալով

— Մի՛ վախճար մարիկ, Օղաւեր չի պիտի մեռնի, Աստուծով խեղքը զլուսը պիտի դայ, իմ կնիկս պատը բլբլ :

— Աստուած ձանիկդ լսէ դաւալիս, բառ խեղճ կնիկը :

Նաքը Մրկըր իր ընկերա՞ր պատնալով, — Տէ կլանք, սուրս կլանք, կրտս կերի կը մրկի կոր, էս չեմ զխանար տանակ բանութու, բեկով դուռնէն դուրս նետուեցաւ :

Ան իրկիւն մինչև աստու խաղալով Ե՛հ ընէ Մրկըր խեղճի պէս վեր վար վաղեց, տակն ասեն կը կենար՝ երկու ձեռքով զլուսը հալիւցնելու ջափ կը սկսէր, ետքը քորի մը վրայ կը նստէր, ալ մովին ձեղրուելուն չը կեցաւ, նետուեցաւ նստուն մէջ սրտը սրտը

կուլար, ուրիշ բան չէր գիտեր. խօսք մը միայն ունէր գոր կ'ըսէր միշտ, երբ ամբար-րըշտութիւն մը կամ անդթութիւն մը տես-նար «Աստուած տուն հաղ տառաստան ա-նես», այսքան. և այդ խօսքը՝ որ կ'ուղղուէր առ ին, կարծես ամենէն զօրաւոր պաշտանն էր իւր վերքին համար. այդ խօսքին մէջն նա կը ծծէր գաղտնի միտքարութեան մը կենսատու շիթերը, որ մեզի պէս տափալ ու գրական կեանքի մը մէջ չփռուող տարրական էակներու բոլորովին անծանօթ է:

Ահ, իր կրօնաւարութիւնն ու եկեղեցա-սիրութիւնը... չէր նայեր ոչ ձիւնի ոչ բու-քի, ոչ լոյսի ոչ խաւարի. սոկէն գիշեր, գրե-թէ կէս գիշերուան մօտ, նա պիտի ելլէր անկողնէն, և մինակ փողոցներն իյնալով, կէս ժամու ճանապարհ մը պիտի կտրէր եկեղե-ցին հասնելու ու Աստուծոյ հետ խօսելու համար:

Խորագրով ու պատուական պառաւուկ... նա միմիայն իր հոգին չէր մտածեր որ արդէն սուրբ էր, լուսաթաթախ էր, գիտէր թէ ուրիշ որոնք կան որք մեղքերու կոյտերու մէջ կը տուայտին՝ կը խօսէր, կը համուէր, գգածեալ ու վսեմ շնչերով Աստուած ու սուրբերը կը ներբողէր որ եկեղեցի դան, ա-ղօթեն, շահին Աստուծոյ սիրտը. և եթէ տես-նէր անտարբերութիւն խորագէտ կը ցաւէր ու իր աղօթքներէն ալ բաժին կը հանէր մե-ղուցելոյ: Այսպէս ես՝ որ իւր սիրելի թոռ-նիկն էի, աշխարհիս ամենէն մեծ ցաւը կը պատճառէի իրեն՝ եկեղեցիի ճայնաւոր սղոց մէջ փայլելով իմ յաճախակի բացակայութիւն-ներովս. չառ անգամ կ'ըսէր որ եկեղեցիի մէջ լացեր էր, սեղանի առջեւէն չը լսելով ձայնս... ամէն գիշեր, կէս գիշերի մօտ՝ քունիս մէջէն կ'զգամ որ անհանգիստ կ'ըլլամ. կը ցնցեն զիս, կ'արթննամ. աշաղթը սրբուհին է գլխուս վրայ, կ'ստիպէ երեւ եկեղեցի եր-թալ միտաւել ու անուշ անուշ «Ջարթիք» ու «Առաւօտ լուսոյ» երգել որպէս զի իւր հոգին ալ փառաւորուի: Տհաճութեամբ կը վռնտեմ. — Գնա՛, քուն ունիմ. ժամանակ չէ... է՛հ, բնաւ չէր ձանձրանար, նպատակին հասնելու համար մինչև առաւօտ ալ կը նստէր. կ'ա-ղաչէ, կ'ողորձէ, տղա՛ս, պալա՛ս, մեղք է. երկու շաբաթ եղաւ ժամ չես եկած, Աստ-ուած կը բարկանայ վրադ, ելի՛ր տղաս, ելի՛ր... — Ե՛՛հ փրփր... դնա գործիդ. դուն ալ... — Է՛հ տղաս, կը տեսնեմ որ չարքերը նորէն մեղքիդ վրայ նստեր ծանրացեր են. ես՝ Տի-րամէր Ս. Աստուածածին կանչէ՛ չարքերը կը հալածուին. հա՛յտէ, հա՛ քեզ տեսնեմ. թքէ այդ չարքերու երեսին և վեր թռի՛ր... և հա-ւաքի հիանալի արտայայտութեամբ մը կ'ըս-կըսէր խաչակնքել գլխուս վրայ՝ չարքերը հա-լածելու համար. և վերջապէս տեսնելով որ մոլորեալ ոչխարը չենէր, տխրութեամբ կը հեռանար, երթալու ու սեւցած հոգիւս հա-մար աղօթքներ ընելու...

Մինչ ցարդ. առանձին սքանչալու մով մը կը յիշեմ բան մը, որ կ'ստիպէ զիս մտովի երկրպագել այդ պառաւի յիշատակին, պաշ-տել իւր անհո՛ւն, գերմարդկային ու իր միա-մտութեանը մէջ գերազանցապէս վսեմ հա-ւատքն ու աղնութիւնը: Երբ կը մտածեմ այդ բաները, մեր այժմեան «գարգաղեալ» ու կատարելութեան հասած ըլլալու յաւակ-նող խէղճները անհունապէ՛ս պզտիկցած, նսե-մացած կը տեսնեմ վսեմութեան, հաւատքին, գրեթէ կրօնատուածութեան առջեւ այն սուրբ ու միամիտ մարդոց, որոնց սերունդն այլ եւս անցած է յաւիտեանս, և որոնց վերջին հա-

տուկտոր բեկորները միայն մնացած են մեր մէջ. իբր Աստուծոյ հրաշագործ մատներէն կաթած երկնային ցողեր մեր ընդհանրու-թեան մօայլոտ ու սեւցած անդունդներու վրայ...:

Ամենէն աւելի հրաշալի եղաւ իր մահը, նման տկարալոյս բայց դեռ իւր գոյութիւնն ըստ բաւականի պահպանելու կարող ճրագի մը, որ վայրկենապէս առանց հոգեվարքի կամ ցաւի նշան մը ցոյց տալու կը մարի: Հօրքուլա՛ իւր աղջիկը, սարսափելի կերպով ծանր հի-ւանդ էր, բժիշկներէն սկսելով մինչև յետին ռամկը իւրեղծին դատակնիքն արձակած էին, անշուշտ պիտի մեռնէր. պառաւ իւր աղջ-կան քովը վազելով երեք ամսոյ չափ հոգւով մարմնով խնամեց իւր հոգեհատորը: Վերջին օրերէ օր մը հօրքուլա տունը հաց թխելու արարողութիւն կար, մինչ հիւանդն ալ վեր գրեթէ մահամբձ էր, հրաշք մը պիտի բլլար եթէ կարենար երկու օր ալ ապրիլ: Վարդ, հացի թոնիրը կրակցած՝ ու հացթուխ կնիկը մագրական (թխելու գործիք) ձեւքը՝ զլուխն անցած էր, մամս ալ կուտնակ կ'ընէր (բողոքի ողորկ փայտով մը խմորի գունաւոր բանալ տա-րածել): Հապիւ թէ հացթուխը «Ես՝ Յիսուս Բրիտանոս» ըսելով առաջին հացը թոնիրի կող-քին կը զարնէր, մամիկս մէկէն ի մէկ կըտա-նակը թողնուլ նստած տեղէն վեր կը ցատկէ և դէպի արեւելք դառնալով դէմքը վսեմ ար-տայայտութիւն մը, մարգարէական ցոյք մը ստացած, կարծես լաւ գիտնալով որ Աստ-ուած իր սիրտը չի կոտրեր, ձեռքերը կը տա-րածէ և թրթռուն ու վեհ ձայնով մը՝ զոր հիմա միտքս բերելով կը սարսուամ, կը գոչէ «Ո՛վ թապէ (նոր) հացի սուրբ հրեշտակ, պարտք կը դնեմ վրադ այս առջին սուրբ հա-ցին առջեւ, ես իմ կեանքիս մէջ ձիկէրի մըր-մուռ (սրտի ցաւ, մօտաւորներէն կամ արեւնա-կիցներէն մէկուն մեռնելէն զոյացած կակիծը) տեսած չեմ, չեմ կրնար գաւկիս մահը տես-նել, ո՛վ Աստուած աղջկանս կեանքին խնայէ, ես թող մեռնիմ անոր տեղ» ու նորէն հան-գարս իւր գործին կը նստի. երկու ժամէն այդ կինը՝ որ հակառակ իւր պատաւութեան քաջատուջ էր, մէկէն ի մէկ տարօրինակ տկա-րութիւն մը զգալով անկողին կ'յնայ, ու յա-ջորդ իրիկուն «թխելի ցաւով հանգիստ մահով» կը գոցէ աչքերն ու կը մեկնի՝ առ Ս. յն, որոյ երկրպագելէ երբէք դադրած չէր իւր կենաց մէջ...: Քիչ միջոցէն հօրքուլա ա-զատեցաւ մահէ մը, որ գրեթէ իւր վզին վրայ հեծնելու ատիճանին հասած էր...: Ընչ կ'ը-սէք ասոր, չէ՞ք հիանար այն անապակ ու անհատնում հաւատքին առջեւ, որոյ ներ-շնչման տակ կարծես կը խոնարհէր Աստուած:

* * *

Շատ ցաւալի բաներ կը տեսնեմ հիմակ. անձնավատահ և թեթեւօրիկ երկրասարդ-ներ, որք հինուկ մինուկ, միամիտ ու տղէս ծերուկի մը առջեւ կը նստին կը շարժին ան-պատկառ, կը խօսին կը կատակեն լրբօրէն, չեն թողնուր որ խօսի, խօսքը բերնին մէջ կը խեղդեն, կ'արհամարհեն, կ'անարդեն, կը ձաղկեն...: Ի՞նչ տարբերութիւն ունին ա-նապաշտէն այդ զաւառեալ ծերերը, հէ՞ — և այսպէսով լեզու կը խառնեն այդ խեղճերուն մնացած քիչ մը օրերուն մէջ: Իմ հաշուովս, անհետացող սերունդ մըն է այդ միամիտ ու տղէս ծերութիւնը զոր կ'արհամարհեն, քիչ միջոցէն ատոնք բոլորովին պիտի հատնին՝ միշտ իմ հաշուովս՝ պէտք էր մենք զանոնք պահէինք այնպէս ինչպէս թարմ ջուրին մէջ կը պահեն թառամած ծաղիկը, ոչ թէ նե-

տէինք աղտեղութեանց մէջ, հետեւելով այն բնական գոլորտանքին, որ մեռելի տէրե-րուն կը դրդէ՝ հիւանդին մահուքէն առաջ՝ փախաքած ամէն մէկ բանը տալ, կատարել, չը զրանալ, գիտնալով թէ պիտի մեռնի...: այդ գէշ բանը ցաւալի է որ դաւառաց մէջ ալ կը տեսնուի այժմ, ծերերը կ'արհամար-հուին. չա՛տ գէշ...: Ընդհակառակն ատանկ-ներուն մոմեաները պահելու ենք, իբր մեր նախնեաց անցուցած կեանքին հարազատ տի-պարները, լուսաւորութիւն ու քաղաքակր-թութիւն զանոնք աշխարհէն կը քշէ, բայց կը փախաքէի որ մեր սիրտերէն ալ դուրս չը քշէր...: Ինչո՞ւ համար թէ՛ իրեններէն և թէ՛ աշխարհէն զզուելով մեռնի՝ չին ժամանակաց միամիտ բարի ծերուկը...: այդ կը ցուցնէ մեր փոքրողութիւնը:

Տպաւորութեան տակ կը գրեմ այս սու-ղբը, չա՛տ յուզուած ըլլալով տեսարանէ մը որուն մօտեւս տեղ մը ականատես եղայ: Երե-ւակայեցեք Պօլսեցի գոտոգուհի մը որ իւր դաւառացի տղէս ծերունի հայրը մագրէն մինչև եղունքները մէկ շունչով լուսոյ արհա-մարհանքի թուքերուն մէջ, ու խեղճը չի կըր-նարով դիմանալ՝ ընկճուած, սրտի ցաւէն նստի ու ընթուռ ընթուռ արտասուէ...:

ՇԱՍՅԵԱԿ ՆԱՐԵԱՆ

ԾԱՂԻԿԻ ԼՈՒՐԵՐԸ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Սիւսի Ամեն. Ս. Կաթողիկոսը, Հա-լէպ գացեր է վիճակային գործերու կար-գադրութեան համար:

— Պատր. գործակատար Աբրահամ էֆ. Թրէնկեան Պայրամի օրը Կայս. Պա-լատ երթալով շնորհաւորութիւններ մա-տոյց: Շնորհաւորական այցելութիւններ տուաւ նաեւ Մեծ-Եղարդոսին և Նա-խարարներուն:

— Վաղը, Գեր. Տ. Աբրահամ Եպիս-կոպոս Մամիկոնեան Պատարագ պիտի մատուցանէ Եյուպի Ս. Եղիա եկեղեց-ւոյն մէջ, որու տօնավաճառութիւնն է:

— Ամասիայի վիճակը, որ բաւական ատենէ ի վեր անհովիւ կը մնայ, խընդ-րած է Ազգ. Պատրիարքարանէ եկեղե-ցական մը զրկել:

— Տ. Գէորգ Ծ. Վ. Երէցեան անց-եալ շաբթու Արեւելեան Բումէլիի Հա-ճիօղու Բաղարճըդ քաղաքը ուղեւորե-ցաւ, տեղւոյն նորակառոյց մատրան օ-ծումը կատարելու:


— Պանարմա-Պալքէտէրի Պատր. Փո-խանորդ Տ. Յովսէփ Ծ. Վ. Այվաղեան, որ անցեալ շաբթու մէջ մայրաքաղաքս եկած էր, չարեքշարթի օր մեկնեցաւ իր պաշտօնատեղին:

— Մաքսուտ Սիմոն պէյ բոլորովին ա-պաքինած ըլլալով, սկսաւ դուրս ելնել իր ապարանքէն:

— Տպադրական տեսչութիւնը Յունիս 8 թուակիր պաշտօնադրով մը դադրե-ցուցած է «Բիւրակն» շաբաթաթերթը:

— Թէեւ թէ՛ Ազգային Կեդրոնական և թէ՛ Սանտարեան վարժարաններու

կողմանէ մէկ մէկ յայտարարութիւններ զրկուած են մեզ, սակայն կը ցաւինք ըսել թէ՛ չպիտի կրնանք նոյնութեամբ հրատարակել զանոնք, աւելոյ անձկութեան պատճառաւ, յառաջիկայ թուով կը հրատարակենք միայն անոնց համառօտագրութիւնն:



Ն Ե Ր Ք Ի Ն

Հեռագիր մը կը ծանուցանէ թէ Բարձր. խորհուրդ քիչ ատենէն Պոլսի պիտի գայ Կապի Մուխթար փաշայի հետ, իր մեծարանքը մատուցանելու վեհ. Սուլթանին:

Բարձր. խորհուրդ հեռագրու չնորհակալութիւն և երախտագիտութիւն յայտնել է վեհ. Սուլթանին, որ բարեհաճած էր արհեստական չքաղարաններ զրկել տրուելու համար Ազեքսանդրիայի արուեստահանդէսին տեղական ցուցադրութիւնն:

—Կը լսենք թէ՛ վեհ. Նազըմ փաշայի վեհապետութեան մէջուրը յառաջիկայ երկուշաբթի պիտի կարգացուի Նորին վահանութեան տապարանին մէջ:

—Վեհ. Սուլթանը բարեհաճած է Մէճիտիյի տեղական պատուանշանը շնորհել Բազարապետ Բրտիման փաշայի:

—Պ. Շիլիկիւնկի Սպարապետութեան հետ բանակցութեան մտած է, բաւական մեծ թուով ձի վաճառելու համար: Զիւրը Սեպտեմբերին պիտի յանձնուին:

—Պաղչէճիկէն հասած լուրերէ կը տեղեկանանք թէ՛ Ժողովուրդը տեսնելով մետաքսի վաճառականութեան օր ըստ օրէ զարգացումը, սկսած է քակել իր այգիները և տեղը թիթենիներ պատրաստել: Եթէ սույգ են այս լուրերը, բան մը որ շատ հաւանական է, Պաղչէճիկէի իրաւամբ շնորհաւորութեան արժանի են իրենց այս օրինակելի ընթացքին համար:

—Հիւանդ-Մանուրի Հայոց եկեղեցւոյն մէջ կատարուած դուռնութեան հեղինակներուն երեքը ձերբակալուել են:

—Երկուշաբթի օր Քիօթիէն մայրաքաղաքս բերուեցան 2035 գաւառակներ:

—Կատարած շուներէ խածուած՝ ութն խում և երեք քրիտոնեայ անձեր մայրաքաղաքս կը բերուին Բաթիթօսեան հիւանդանոցին մէջ դարմանուելու:

—Գարատաղի գործակատար Պ. Պաքիչ ամուսնացաւ Օր. Լիսանկի հետ, նախագահութեամբ Յունաց Ս. Պատրիարքին և կնքահայրութեամբ Ռուսական դեսպանին:

—Գաթիմանիկի մէջ վերջերս կատարուած մարդահամարէ մը կը տեսնուի թէ՛ նոյն կուսակալութեան ընդհանուր բնակչաց թիւը 988114 է եղեր:

—Վանայ ծովուն մէջ շոգենաններ պիտի բանին և ստոնց համար պէտք եղած հանքածուխը պիտի աւանդի Նորտուղ գիւղի (Վանէն 9 ժամ հեռու) չրջակայքը գտնուած անծուխի հանքէն:

—Վանայ մէջ կաղմակերպուած Համիլիյէ հեծեղադուռներու թիւը 18ի հասած է:

—Պէրուլիյի Մուսա խուրի Էֆէնտի, որ մայրաքաղաքս կը գտնուի, աղերապելի մը տալով Մեծ-Նապաքտին յայտարարած է թէ՛ տունէ մը դուռն է քոչքայի գէմ, որ թէյի նման եփուելով պիտի խմուի եղեր: Մուսա խուրի Էֆ. յաւելցուցած է թէ՛ այդ տունէ կին օգտակարութիւնը եթէ յետ քննութեան

հաստատուի, պիտի կրնայ սերմը մատակարարել և մշակութեանն աշխատիլ:

—Մայիսի 28էն մինչեւ 3 Յունիս մայրաքաղաքս և արդարձանաց մէջ 195 մահեր պատահել են, որոց 89ն այր և 106ը կին են:

—Քաղաքային բժշկական և Իրաւագիտական վարժարաններու տարեկան քննութիւններն սկսան չորեքշաբթի օր:

—Կայս. Իրատէի մը համաձայն՝ ամեն օր, իրիկուն և առտու, թէյ տրուել սկսած է բոլոր զինուորաց:

—Սերպիոյ Ազեքսանդր թագաւորը, որ ճամբայ ելած է Կ. Պոլիս գալու համար, կիրակի իրիկուն Սէլանիկ հասած ըլլալով՝ երեքշաբթի առաւօտ մայրաքաղաքս կ'ապաստուի:

—Կայս. Իրատէի մը համաձայն, Թօրխանէի և Թէրսանէի գործարանաց մէջ վերջին զրոյթեամբ Մազլէրեան հրացաններու շինութեան պիտի ձեռնարկուի:

—Սէլանիկի մէջ տենդ և թիֆօ կը ճարակի թեթեւապէս:

—«Թարիզ» լրագիրը հինգշաբթի օրուընէ սկսած է ծախուել 10 փարայի փոխանակ 20ի:

—Գօնիայի տարեկանապետ Իպրահիմ ալէյ բէվօլլէի հարուածով սպաններ է հռչակուելու աւաղակապետ Չուլլու օլլու և իր ընկերը Չէքքէ Զէքքի, որք Կ. Պոլսէն գացող թղթատարը կողպուելով փախուստ կուտային:

—Կայս. կառավարութիւնը դրած է որոց որ անկ է՝ զինուորադրութեան գործողութիւնները առժամապէս դադարեցնել այն տեղերու մէջ յորս քոլերան կը ճարակի:

—Պ. Բօնտուլիի վաճառատունը, Իզմիրի մէջ, այրել է քանի մ'օր առաջ: Վնասը 17, 000 սակի կը հասնի, որուն 15 000ը ապահովագրուած է եղեր:

—Մահմուտ ու Ահմէտ անուն երկու աւաղակներ, որոնք վեց տարիներէ ի վեր կ'ապաստակէն եղեր, Տրապիզոնի Այսաքը գիւղախմբին մէջ ձերբակալուելով յանձնուել են տեղական կառավարութեան:

—Երէկ ժամը 3ին էյուպի Տիւլմէճիէր թաղի Օլլուղլը Պայըր ըսուած տեղէն հրդեհ ծագելով փայտաշէն տուն մը այրեցաւ:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Քոնիայի Քրանտական կառավարիչը Փարիզ գնաց Անգլիոյ և Քոնիայի միջեւ կնքեալ դաշնագրոյն առթիւ գաղթային նախարարներուն հետ բանակցելու: Պրուսիի լրագիրները հաւանական կը համարին ընդհարում մը ձրանտացիներուն ու Քոնիայի պետութեան պաշտօնեայիններուն միջեւ, Վերին Քոնիայի մէջ, ուր յարաբերութիւնը յոյժ ձգտեալ են:

—Կաթիլիկ եպիսկոպոսներու Հռոմ երթալուն առթիւ Ռուս կառավարութեան կողմէ տրուած արգելքը վերցուել է:

—Բանամայի մէջ վերջերս ծագած մեծ հրդեհ մը 3 միլիոն տղարի փասս պատճառել է:

—Գերման կայսրութիւնը մօտերս Համպուրիէն զօրախումբ մը կը զրկէ Ալիբիէ, իր ստացուածքներու պահպան զօրաց թիւն աւելցնելու նպատակով:

—Պ. Քրիսթի անյուսալի յաջողութեամբ կազմած ըլլալով իր վարչութիւնը, արժանացել է թագաւորին ու գահաժառանգին իւրնդակցութեան:

—Յունաստանի մէջ երկրաշարժներու վըժ

նասները կարծես բաւական չէին, վերջերս ալ շատ մը անտառներ բռնկել են:

—Իտալիոյ թագաւորը 1000 ֆրանք զըրկել է ձրանտա, Մարէչալ Մաք-Մահոնի արձանին համար:

—Մարդի սահմանադրոյն վրայ Քրանտական զինուորներու հաւաքման լուրը, մեծ յուզում պատճառել է Մարիտի մէջ:

—Սուէդի ջրանցքի ընկերութեան նախագահութիւնէն՝ ծերութեան պատճառաւ հրաժարած ըլլալով Պ. Տը Լէսէփս, իրեն յաջորդ պիտի նշանակուի Պ. Կիլար, որ յիշալ ընկերութեան կողմէ վերջերս Եգիպտոս զըրկուած էր:

ՁԱՆԱԶԱՆ ԴԷՊՔԵՐ

Երեքշաբթի օր Թօրխանէէն անցնող ձի մը Բօզա անուն կին մը տապալեց որ ծանրապէս վիրաւորուեցաւ:

—Սկիւտարի՝ Սէյտ Ահմէտ Տէրէսին անծանօթ չարագործ մը Ահմէտ անուն հովիւի մը վրայ յարձակելով ծեծեց, գրպանը գլուխուած 20 սակի և 39 մէճիտիյէն յախտակեց ու փախաւ:

—Երկուշաբթի օր Ելտի-Գուլի Հաճի Բիլի թաղին մէջ հրդեհ ծագելով փայտաշէն տուն մը այրեցաւ:

—Նոյն օր երկու Հայ տղաքներ, երկուքն ալ ոսկերիչի աշխրտ կուռի բռնուեցան, և մին կուրծքէն վիրաւորեց միւսը:

—Դարձեալ նոյն օր իրիկուն գէմ Սալգըմ Սէյիւտի կողմը թրամուէյի կառք մը՝ կոխուեց ու վրայէն անցաւ հինգ տարեկան իհսան անուն տղեկի մը, որ անմիջապէս մեռաւ:

—Մաքրի գիւղի մէջ երկաթուղւոյ կառախումբ մըն ալ տապալեց խիստ անուն կառապան մը, որ ծանրապէս վիրաւորուելով հիւանդանոց տարուեցաւ:

—Զարեհ անուն հայ երիտասարդ մը Պէպէի կողմը ձիով պտոյտ մը բրած ատեն, վար իյնալով՝ գլխին ծանրապէս վիրաւորուեցաւ:

—Մակոյկով Տէյլիմէնտէրէյէն Իզմիտ գացող զինուորական երեք սպայներ փոթորիկ բռնուելով ծովը կ'իյնան. երկուքը լողալով կ'ապաստուին Քիլիս քաղաքին՝ հարիւրապետ Տըթ. Հիւսէյնի մէջ կը խոյրուի:

—Երեքշաբթի՝ Բազըմխանէի մէջ մէկուկէս անգլիական զէրու տղայ մը գետակին եղերքը խաղաղած պահուն մէջն ինկաւ ու խոյրուեցաւ:

ԱՐԺԻՔ ԴՐԱՄՈՅ			
Օսմ. իրան 100 զուրուշէն			
Մէճիտիյէ	107 35	Բուսիդ բօլ	90
Քառորդ մէճիտ	105	Նաբօլէն	87 15
Մանր մէճիտ	103 20	Գրիմից	51 17
Մէթալիք	97 50	Անգլ. իրան	110 3
Գոնապիտէ	26 35	Բ. երկ. Ք. 121 25	533 5
Մանէթ թղթատար 8 30			

ԽՆԴՐԱՆՔ ՄԸ

Իմանալով որ՝ մեր պաշտօնակիցներէ ոմանք կը շարունակեն զրկել իրենց թերթերը «Ծաղիկ»ի հին հրատարակչին անուն, կը խնդրուի իրենցմէ ուշադրութիւն դարձնել թերթիս նոր խմբագրատան հասցէին:

ՆԱԽԱԿԱՏՈՒՓ «ԾԱՂԻԿ»

Գ. Բ. Մ. — 2եր թերթերն ու ընկա-
լագիրը զրկեցինք. 33 դր. կը պարտիր:
Թ. Բ. Մ. — 2եր նամակն առինք:
Գ. Բ. Մ. — 2րդում 43 զուրուշը ա-
ռինք. «Ծաղիկ»ն ու «Խաղիկ»ն ձիւնունքը
կը զրկենք չարունակաբար:
Գ. Բ. Մ. — «Ծաղիկ»ն առաջին թի-
ւերուն հետ զրկած ենք մեր Գրադուցակն ալ:
33 զուրուշը տուէք Տիւրքիան Սարգիս Էփ. Ի:
Ա. Է. Զ. — Մ. Պ. Խ. — «Ծաղիկ» չարու-
նակաբար պիտի զրկուի ձեր ցցուցած հասցէ-
ներուն: 66 դր. կը պարտիր:

Վ Բ Ի Պ Ա Կ

«Ծաղիկ» թիւ 4, երես 29, սխալ 1,
տող 32 — «34 ամիս»ը պէտք է ըլլայ «3-4
ամիս»:

ՄԱՄԱԼԱՌ ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ

«Խաղիկ»ն ձիւնունք թերթերէն չարա-
թաթերթը ուղերով օգտակար և զիւրա-
մատելի ընել Օսմաններէն զիւրաց. «Ծա-
ղիկ»ն բաժանորդներուն տարեկան բաժ-
նեցինք փոխանակ 23ի ինչոյցած ենք:

ՄԻՄԱՅՆ 10 ԴՈՒՐՈՒՇԻ

Այս առթիւ աւելորդ չենք համարիր
ծանուցանել թէ՛ տպագրիկ բաժանորդա-
դրութիւն — մանաւանդ զաւտաներու
համար — երբեք չպիտի կրնանք ընդու-
նիլ, քանի որ թէ «Ծաղիկ»ն և թէ «Խա-
ղիկ»ն ձիւնունք բաժանորդներէն կարե-
ւոր դուռնաք մը չեն կազմեր և երկար
բարակ հաշիւ բռնելը չարժեք:

ՄԵՐ ԲԱՃԱՆՈՐԳՆԵՐՈՒՆ

Ծաղիկի բաժանորդներու գործատանց
ազդարարութիւնները՝ տասը տողէն ա-
ւելի չըլլաւ. պայմանաւ՝ մէկ մէկ տն-
գամ պիտի հրատարակուին թերթիս ազ-
դարարութեանց բաժնին մէջ առանց
վարձի: Աւտար կը խնդրուի Ծաղիկի
բաժանորդներէն ժամ առաջ զրկել իրենց
այդ կարգի ազդարարութիւններէն:

ԳՐԻԳՈՐ ԳԱՅԱՆԵԱՆ

Տ Ե Ր «Ա Ս Ը Ր» Գ Ր Ա Տ Ա Ն

Հրատարակիչ «ԾԱՂԻԿ» և «ԽԱՂԻԿ» ձիւն-
ունք չարաթաթերթերէն:

Կրնէ մասնաւոր գործատուներն ամէն լեզու
և ամէն տեսակ գրքերու վրայ՝ կը գնէ և կը զրկէ
Օսմաններն և Նուրուշի ամէն տեսակ տրված գրքեր.
Հինգ դր. ի Օսմաններն նամակադրուի փոխարէն՝ կը
քննէ և կ'իմացնէ. Արեւ. երկաթուղւոյ բաղադրումն
մը՝ մինչեւ ցորդ տեղի ունեցած վիճակահանութեանց
մէջ չափած կամ չափած լինելն: Բաժանորդ կը գրէ
և կանոնաւորապէս կը զրկէ Մայրաքաղաքիս մէջ հրա-
տարակող ամէն լեզու և ամէն տեսակ թերթ և
գիրք: «Ծաղիկ»ն մէջ երկու անգամ հրատարակել կը
խոստանայ այն ամէն հրատարակութիւններն որոց հե-
ղինակը կը հաճին չորս չորս օրինակ զրկել առանցմէ:

ՄԵՃՄՈՒՅՅԻ ԹԱՊԻՐԱԹԸ ԸՆԴՄԻՅԻ

Կառավարական ամէն կարգի պաշտօններու դադ-
րիւնէն և թերթերէն համապատասխան անունները
պարունակող կարեւոր գործ մ'է: Դին 2 դր.

Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր


اصطلاحات ادبيه

ԸՍԹԸԱԼԱԹ ԵՏԵՊԵՅԷ. — Գորուս Ըսմանցի
առաջնակարգ գրագէտ Բանաստեղծներէն հանգուց-
եալ Մուսալիսի Կամիի այս ընտիր ու եզակի հեղե-
նակութիւնը կ'յառնաբարենք Ըսմաններն զրկա-
նութեան բոլոր սիրահարներէն: Ազդին մանկուցն
լաւ դաստիարակութիւն մը տալու պարտականու-
թիւնը ստանձնող Ըսմաններն լեզուի ուսուցիչները մա-
նուանդ պէտք չէ անտեսել այս ազդական ասաց-
ութեանը որ յստակ, սահուն և գիւրդաւոր ռաւ-
մը պատրաստուած կու գայ տնհրածեշտ պէտք մը դո-
հացնել. Ըսմաններն զրկանքաւորութեան դա-
տուր կարեւորագոյն պէտքը, որ դժբաղդաբար մեր
վարժարաններու մէջ նկատուած թեւեւ անգամ առ-
նուած չէ:

Գինը 20 դր. է: Վարժարաններու համար գոհա-
ցուցիչ գեղջ ընել կը խոստանայ թերթիս հրատա-
րակիչը:

* * *

ՈՇԳՂԵՑՈՅՑ Պարսկերէն լեզուի Ըսմաններն լեզ-
ուի ուսուցիչներն և առաջնակարգ փաստաբաններն
Տ. Սարգսեան հարուցիւն էֆէնտի ազդային վարժա-
րաններու համար պատրաստած է այս ընտիր գիրքը:
որուն պէտքը զգալի է բաւական ժառանգելի վեր-
ջերը կը պարփակէ իր մէջ կարգ մը հետաքրքրա-
շարժ և բարդալից պատմութիւններ, բանաստեղծա-
կան գողտրիկ կտորներ, զորս խնամք ընտրած է հե-
ղինակը, և որ կարեւորագոյն է, իւրաքանչիւր բառի
հայերէն իմաստը, ընթերցման եղանակն ու մանկի-
նէրու քերականական ծանօթութիւններն գրած է:
Արժակ ու բանաստեղծական հատուկներու տակ
Պարսկերէն տրվելու փափաքով ամէն անհատ պէտք է
զննէ այս գրքէն հատ մը, զինքն զր. է. և «Ծաղիկ»ի
հրատարակչին զրատունք կը ծախուի: Կառուցողը
գանաւոր ուսուցչաց՝ 40 փաթեանց նամակագրուի մը
փոխարէն՝ մէկ մէկ օրինակ կը զրկուի երեւ. նմոյշ:



Թէ՛ ՀԶԻՊ ԻԻՎ ՄԱԳԱՐԸՐԱԹ. — Մահ-
քեմէի թէ՛ միջին կոյէի թէ՛ շէքրի լիւ, մէ-
հաթիմի ու մուսլիմներէն հետեւի մուհաբէ-
մաթընտա վէ իթաի հիւքմէրինտէ վաղը
օլան սէֆիյաթըն թէ՛ միջին, վէ ահգադ
հադ իչին ինտ էլ իմազ հիւքմիւն նաղը
մուգաստ միւհիմնիսինէ մէսին պիր մին-
պլիլ տապէթ՝ վէ ահքեամ գանունիլէ-
նին հալ ու թէֆսիր վէ մանեալ իչուն
թապաղաթ մէհաթիմին պիր մէքմի ին-
թիհաթ օլուտղունտան, մուգարբըրաթ
աալիլէսի հէր նէ գասաթ «Ճէրիաթի Մէ-
հաթիմ»ը նէշ օլունմուշտաւ մէքրիւր
կաղէթանլըն զօլլէրսիօնու հէր քեստէ
մէվճուտ օլունտղըրնան, շու մուդար-
բէրաթըն — միւհէրքէտ միւհէթէսլիլին
աալիլէյէ վէ տահաթը մէսալիհէ պիր
խրվմէթ օլմադ իւզըր — թարիխ, նամէրօ
վէ տահիֆէ սըրսալիլէ «Ճէրիաթի Մէհա-
թիմ»ան ճէմ ու թէրթիւլ օլունմուշտալ:
Պէհաթը 6 դր. տըր:

* * *

ԱՍՐԸ ՔՐԻՊԹԻՊԻԱՆԵՆԻ ԶԻԿԵՅԷՆԻՆ. —
Թուրք գրագէտներու գրչէն ելած պզտիկ պլե-
պիւր են, ընտանեկան և օտար կենցաղէ առնուած.
մինչեւ ցորդ հրատարակուածներու թիւը կը հասնի
առան և մէկի: Առանձին առանձին կը ծախուին հա-
տը քան, երեսուն, քառասուն և յիսուն փաթեցի:
Ամբողջին գինը 9 դր. կը ըլնէ:

كل غنجة حقوق

ԿԻՒՎ ԿՈՆՃԻ ԶՈՒԳՈՒԳ. — Էդգըրայի
վիւքէլայի տալիսին Կլիպօլուր Մէհմէտ Բի-
նաթ պէյին Էսէրի օլուպ՝ միւհաթիմաթը
Սըրֆ հուգուգա տալիս, Գալմիլին վէ Մու-
գարբըրաթը թէ՛ միւհիլլէ, Գալմիլիաթի ճարիլէ,
Շէրաթիլի միւսթէպլիլէ վէ պլիմնաթէ միւս-
աթիլլէլլէ գապիլը իսթիմաթ օլուպ օլմայան
աալիլին իմադսիմաթը միւսթիւլ մլվատուի
միւհիմնաթիւ իսթիլիլ տըր: Թիյաթը 100
փաթա տըր:

مسائل مهمة منتخبة

ՄԷՍՍՅԻԼԻ ՄԻԷԷԻՄԻԼԻ ՄԻԷԷԻՄԻՊԷ.
— Պու տա Բիֆաթ պէյին Էսէրի օլուպ՝ մէ-
հէլլէի ահքեամ տալիլէ, տըրալի, թիւհաթիլի
պլիլլէ վէ պահիլլէ գանունիլլէ տաւը
մուհաթէմաթ հուգուգիլլէ գանուն մուսթիւլ-
գաթընտան միւհիլիսիլ վէ էրապըր տալիս
իչին էն զիյաթ պլիլլէլլէ իւսթիլլէ օլուն պաղը
միւսթիլլէ միւհիմնաթիւ թէ՛ իսթիլլէ օլունմուշ-
տըր: Թիյաթը 2 դր. տըր:

* * *

ՊԵՐԸ ՏԵՏԻԱԿ. — Կարապետ Էֆ. Աղնաւորան
գարպէրու համար պատրաստած է տեաքիլեր պատ-
կերազարդ կաղրիքով և աղիւ թէ՛ թիւ. երեսներու
երեսներէ բաղկացած իւրաքանչիւր տետրակ կը
ծախուի 10 փաթեցի. կան նաեւ քան և քառասուն
փաթեանց տետրակներ, որոց թիւ զինքն աւելցուած է
նոյն համեմատութեամբ. կաղրիքուն վրայ կան թիւ
ԿՍԻՊ. ՍԵՏԻԱԿ. ՍԵՏԻԱԿ. ՍԵՏԻԱԿ.
Երեսներն որոց առջեւ աշակերտ պիտի գրէ պէտք
եղածը:

Վաճառման կեդրոնաւորէն է. Միւսթիլլէ տըր
Աղնաւորանի սրճարանը, Պապ. Սիւ ճառախի ճառիք-
խանի մէջ:

خزينة فنون

ԽԱՉԻՆԵԻ ՁԻՒՆՈՒՆ. — Շարաթիլի թիւհիլ
Գրական, Գրական և Բանաստեղծական.
ամէն հինգ շաբթի կը հրատարակուի, Ծաղիկի
հրատարակչին զրատունէն: Թերթը կը բաղ-
կանայ ութն երեսներէ, ունենալով իր մէջ
առանձինն կըլիւ. թերթին երապական ու
աւելական կենցաղի տնտես: Իւրաքանչիւր
թերթը կը ծախուի 10 փաթեցի. տարեկան
բաժանորդալիլն է. Պապ. համար 10, գա-
ւառներու համար 23 դրու է: Խմբագրու-
թիւնը յառնում է կարող և ծանօթ զրիչ-
ներու, որք ամէն բանէ աւելի հոգ կը տանին
ոճին միւսթիլլէլլէի և լեզուին կանոնա-
ւորութեան:

* * *

ՄԱՌԱՆԻՄԻ ԳՐԱԼԻ. — Թուրքերէն ընթերցա-
նութեան ընտիր գիրք մըն է, Մէլալի Էֆ. և Սապիւ-
ղի «Ալիան Իզալէթիլ» ընկերութեան վարժարան-
ներու Օսմ. լեզուի ուսուցչէն պատրաստուած. պա-
րունակութիւնը հետաքրքրաշարժ և սիրուն է ունի
նաեւ մանկանց միտքն աղմուսնելու ամէն յստակ-
ութիւն: Անհանալի բաւերու քով գրուած են Գաղ-
ղիերէն և Թուրքերէն իմաստներն ամենապարզ բառե-
րով: Գինը 3 դր. է:

ՄՕՏԻԼ. — Գաղղիերէն գեղարուած համար
պատրաստուած տետրակ մ'է. կը պարունակէ տնկ-
լէզ, բոնտ և կոթիլ գրերու ամէն տեսակներն. դո-
ծածութիւնը ընդունուած է գանազան վարժարան-
ներու մէջ, Գինը 60 փաթեցի է:

ԱՐՏՈՆԱՏԵՐ Ա. ՍԱՊԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. «ԾԱՂԻԿ» ԼՐԱԳՐՈՅ